ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՎԱԾՈՒԹՅԱՆ ՏԵՍԱՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ *

Սևակ Նիկողոսյան

Բանալի բառեր՝ *ազգային անվտանգություն, քաղաքականություն, կառավարում, հասարակական կազմակերպություն, քաղաքացիական վերահսկողություն, բարեփոխումներ:*

Հանրային քաղաքականության նկատմամբ հսկողություն իրականացնող հասարակական կազմակերպությունների վերաբերյալ ուսումնասիրության մեթոդաբանությունը ներառում է հասարակական կազմակերպությունների աշխատանքը կարգավորող օրենսդրության ընդհանուր դիտարկումն ու պրակտիկայի ուսումնասիրությունը, դրանց խնդիրների ու մարտահրավերների վերլուծությունը: Պայմանավորված ՀՀ հասարակական կազմակերպությունների՝ սոցիալական և քաղաքական ոլորտների վրա ազդեցության մեծացմամբ, ՀՀ ազգային անվտանգության և երկրի զարգացման ապահովման տեսանկյունից առանձնահատուկ նշանակություն ունի հատկապես առավել ազդեցիկ կազմակերպությունների գործունեության, դրանց քաղաքական, սոցիալական, քաղաքակրթական նշանակության հետազոտումը: Ավելին՝ հասարակական կազմակերպությունների դերը քաղաքական համակարգում պայմանավորված է հասարակարգային (նաև կառավարման) համակարգի ընտրված (կիրառված) մոդելով՝ հիմքում ունենալով մի կողմից քաղաքացիների պահանջատիրությունը, իսկ մյուս կողմից՝ հանրային կառավարման համակարգի նկատմամբ քաղաքացիների վստահությունը և աջակցությունն ունենալու անհրաժեշտության գիտակցումը[1]: Այս երկու գործոնները նկատի ունենալով՝ հանրային կառավարման տեսությունը ներկայումս առաջնային է համարում թափանցիկության և ազգային անվտանգության ոլորտի կառավարման համակարգում հաշվետու լինելու սկզբունքների ամրագրումն ու լայնորեն կիրառումը:

Ժողովրդավարական արժեքային համակարգում որպես ազգային անվտանգության համակարգի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության առավել արդյունավետ միջոց՝ առանձնանում է նաև «հասարակական կամ արտապետական վերահսկողությունը»: Ընդ որում, «արտապետական վերահսկողություն» տերմինը պայմանական է, և նկատի է առնվում այնպիսի հաստատությունների վերահսկողական գործունեությունը, որոնք պետական իշխանության մաս չեն կազմում, սակայն ակտիվ կերպով մասնակցում կամ օժանդակում են պետական քաղաքականության իրականացմանը[2]:

ՀՀ գործող օրենսդրությամբ սահմանվում է, որ հասարակական կազմակերպությունը ՀՀ քաղաքացիների, օտարերկրյա պետությունների քաղաքացիների, քաղաքացիություն չունեցող անձանց և (կամ) իրավաբանական անձանց հասարակական միավորում է, որն ունի ոչ առևտրային կազմակերպության կարգավիճակ[3]: 2019 թվականի հունվարի 1-ի դրությամբ Հայաստանի Հանրապետությունում գործում են պետական գրանցում ստացած թվով 4222 հասարակական կազմակերպություններ: Հատկանշանական է, որ դրանց թիվը աճման միտումներ է դրսևորել հատկապես վերջին 3-

* Հոդվածն ընդունվել է 04.10.19:
Հոդվածը տպագրության է երաշխավորել ԵՊՀ քաղաքական ինստիտուտների և գործընթացների ամբիոնի վարիչ, պրոֆեսոր, ք.գ.դ. Գ. Քեռյանը: 28.10.19:

5 տարիների կտրվածքով, օրինակ՝ 2018 թվականի ընթացքում սկզբնական գրանցում են ստացել թվով 478 կազմակերպություններ[4]:

Գաղափարական տեսանկյունից հասարակական կազմակերպություններն ընկալվում են որպես ընդհանուր շահերի հիման վրա ձևավորված և իրենց հոգևոր ու ոչ նյութական կարիքները բավարարելուն ուղղված որոշակի անձանց միավորող ընկերություններ: Ակնկալվում է, որ դրանք պետք է նպաստեն հասարակական կյանքի տարբեր ոլորտների զարգացմանը, ակտիվացնեն մարդկանց, աջակցեն ինքնահիրացմանը, ուղղորդեն նրանց ներուժը, նպաստեն շփմանը, տարածեն գաղափարներ, ձևավորեն հասարակական կարծիք, զարգացնեն քաղաքացիություն, բարձրացնեն իրազեկությունը իրենց իրավունքների ու պարտականությունների հանդեպ և որոշակի թեմաների վերաբերյալ, մոբիլիզացնեն շահառուներին, պաշտպանեն նրանց իրավունքներն ու շահերը, հարցեր բարձրացնեն կառավարության օրակարգ, նպաստեն բարեփոխումներին, աջակցեն կառավարության գործունեությանը, օգնեն այն հիմնահարցերի լուծմանը, որոնք վերաբերում են հասարակությանը, ներգործություն ունենան որոշումների կայացման վրա, կառավարության գործողությունների նկատմամբ հանրային վերահսկողություն իրականացնեն:

Հասարակական կազմակերպությունները, ընդհանուր առմամբ, ճանաչված են որպես հասարակության ինքնակազմակերպման կարևոր գործիք և լուրջ դեր ունեն այնպիսի երկրներում, որոնք ընտրել են ժողովրդավարության ուղին: Հասարակական կազմակերպությունները հիմնված են կամավորական աշխատանքի սկզբունքի և հասարակության տարբեր հիմնահարցերին անդրադառնալու ցանկության վրա: Պետական կառույցների ներկայացուցիչները բազմաթիվ անգամ տարբեր առիթներով ընդգծում են, որ հասարակական կազմակերպությունների հիմնական ազդեցիկ կողմը դրանց ոչ քաղաքական բնույթն է: Այս կազմակերպությունների կողմից քաղաքական հարցերի բարձրացումը վտանգում է դրանց գործունեության հանդեպ վստահությունը և ցույց է տալիս վերջիններիս քաղաքական դիվիդենտների ակնկալիքները:

Համաշխարհայնացման արդի պայմաններում ազգային անվտանգության և ժողովրդավարության տարընկալումները որոշակիորեն սրվում են, ի հայտ են գալիս նոր մարտահրավերներ՝ պահանջելով վերիմաստավորել ազգային անվտանգության պարադիգմը ինչպես պետության, այնպես էլ անհատների և քաղաքացիական հասարակության կողմից: Ժամանակակից ժողովրդավարական պետությունն ազգային անվտանգությունը սահմանում է որպես իրական և հնարավոր արտաքին ու ներքին սպառնալիքներից անձի, ընտանիքի, հասարակության ու պետության կենսականորեն կարևոր շահերի պաշտպանվածության վիճակ, այսինքն՝ երկրում ապահովված են անձի, հասարակության և պետության իրավունքը, ազատությունը և պաշտպանվածությունը, ինչպես նաև երաշխավորում է նրանց փոխկապված համակարգային զարգացումը: Պետություն-քաղաքացիական հասարակություն գործակցության շղթայում կարևոր է երկկողմ փոխկապվածությունը՝ առանց որևէ կողմին առավելության դիտարկման[5]: Այդուհանդերձ, տվյալ համատեքստում անհրաժեշտ է հստակ սահմանել պետության, քաղաքացիական հասարակության և անհատի փոխհարաբերությունների այն չափորոշիչները, որոնք ապահովում են ներդաշնակ փոխազդեցությունը՝ երաշխավորելով երկրի անվտանգությունը:

Քաղաքացիական հասարակության գործունեությունն ուսումնասիրողների մի մասն իրենց հայեցակարգերը ձևավորում են՝ հիմք ընդունելով Թ.Պարսոնսի, Ժ.Կոհենի և այլ գիտնականների դիրքորոշումները [6]: Իրենց աշխատություններում նրանք ելնում են այն մոտեցումից, որ քաղաքացիական հասարակության հիմքն անձն է, որը, հանդիսանալով այս կամ այն խմբի մասը, իր բազմակողմ պահանջմունքները բավարարում է այդ միավորումների, ասոցիացիաների և այլ տիպի կազմակերպությունների միջոցով: Դրա համար քաղաքացիական հասարակությունը հնարավորություն է ստա-

նում ազդելու պետության ներսում ժողովրդավարական նորմերի կայացման և տարածման վրա: Նման հասարակության գործունեությունը հիմնված է այնպիսի հասկացությունների վրա, ինչպիսիք են՝ վստահությունը, համագործակցությունը, փոխադարձությունը, հանդուրժողականությունը, հանրային փոխօգնությունը, սոցիալական և քաղաքական ակտիվությունը, որոնց ամբողջությունը հանդիսանում է «սոցիալական կապիտալ»՝ նպաստելով անվտանգ և զարգացած ժողովրդավարական հասարակության կայացմանը: Բացի այդ, սոցիալական հավասարակշռությունը միանշանակ դրական է անդրադառնում նաև հասարակության տարբեր շերտերի միջև հանդուրժողականության ու գաղափարական միասնության ապահովման առումով՝ բացառելով շահերի բախման կամ հասարակության մեջ անհավասարակշիռ ու բևեռացված դսրևորումները [7]:

Այդ հարցում մեծ դեր ունեն հասարակական կազմակերպությունները: Միջազգային հետազոտական ինստիտուտների վերլուծություններում դիրքորոշում է ընդգծվում, որ հասարակական կազմակերպությունները նոր նորմեր են զարգացնում, որոնց միջոցով կարողանում են ուղղակիորեն ճնշում գործադրել կառավարությունների, գործարարների վրա, որպեսզի վերջիններս փոխեն իրենց քաղաքական ուղին [8]:

Հասարակական կազմակերպությունները նաև կարող են անուղղակիորեն հասարակական կարծիք ձևավորել այն խնդրի շուրջ, թե ինչ փոփոխություններ պետք է անեն կառավարություններն ու գործարարները: Հասարակական կազմակերպությունները, իհարկե, չունեն «կոշտ ուժ» գործադրելու հնարավորություն, սակայն նրանք հաճախ կիրառում են «փափուկ ուժ», որը ենթադրում է ոչ թե հակադրվելով, այլ գրավելով ցանկալի արդյունքների հնարավորությունը: Եվ քանի դեռ հասարակական կազմակերպությունները լայնածավալ համախոհներ ունեն, կառավարություններն ու պետական հաստատությունները ստիպված են հաշվի նստելու նրանց հետ:

Պետական կառավարման, և հատկապես՝ ազգային անվտանգության քաղաքականության իրականացման գործընթացներում հասարակական կազմակերպությունների ներգրավման կարևոր կառուցակարգ է անմիջական (ներկայացուցիչներով) մասնակցությունը խորհրդատավական բնույթի միջոցառումներին՝ թե մշտական հիմունքով իրականացվող (հանրային խորհուրդների, պետական մարմիններին կամ պաշտոնատար անձանց առընթեր հասարակական կառույցների) աշխատանքներին, թե կոնկրետ խնդրի կամ հարցի առնչությամբ կազմակերպվող ծրագրերին: Որպես առաջին տարբերակի օրինակ կարելի է նշել Հանրային խորհուրդը, ՀՀ պաշտպանության նախարարին կից հասարակական խորհուրդը և այլն: Այսպես՝ ՀՀ Հանրային խորհուրդը (որը գործում է 2008 թվականից) կազմված է 36 անդամներից և 12 ոլորտային հանձնաժողովներից, որոնցում ներկայացված են շուրջ 1200 հասարակական կազմակերպություններ՝ իրենց 1950 ներկայացուցիչներով[9]: ՀՀ պաշտպանության նախարարին կից ստեղծվել է հասարակական խորհուրդ, որը, ունենալով խորհրդակցական մարմնի դեր, գերատեսչության ղեկավարին աջակցում է հասարակության հետ հարաբերություններում: Խորհրդի կանոնադրության համաձայն՝ վերջինիս կազմում կարող են ընդգրկվել հասարակական կազմակերպություններ, զանգվածային լրատվության միջոցներ, ազգային փոքրամասնություններ ներկայացնող կազմակերպություններ, ինչպես նաև այլ շահագրգիռ անձինք, որոնց գործունեության բնույթը համընկնում է նախարարության գործունեության հիմնական ուղղություններին, պաշտպանական ոլորտում ունեն առնվազն 2 տարվա մասնագիտական փորձառություն[10]: Պաշտպանության ոլորտում գործող նշված խորհրդակցական մարմնի կազմավորումից մինչ օրս դրա աշխատանքներին մասնակցել են բազմաթիվ հասարակական կազմակերպությունների ղեկավարներ և ներկայացուցիչներ, որոնց հետ համատեղ աշխատանքը, որի արդյունքում աջակցություն է ապահովվել գերատեսչության առջև դրված խնդիրների ու գործառույթների առավել արդյունավետ իրականացմանը՝ ոլորտում վարվող ընդհանուր քաղաքականության վերաբերյալ ներկայացնելով առաջարկներ և դիտողութ-

յուններ, ինչպես նաև քննարկվել են հասարակության տարբեր շերտերի կարծիքներն ու տեսակետները՝ երկրի պաշտպանական քաղաքականության ու համակարգի գործառնության խնդիրների և գործառույթների իրականացման վերաբերյալ:

Իսկ մասնակցության վերոնշյալ երկրորդ ձևաչափը հատկապես վերջին տարիներին լայնորեն կիրառվում է գրեթե բոլոր ոլորտային և համապետական նշանակության հարցերի քննարկում ու որոշումների մշակման գործընթացներում, այդ թվում՝ նաև ազգային անվտանգության քաղաքականության շրջանակներում: Մասնավորապես, ներկայումս << Անվտանգության խորհրդի գրասենյակի կողմից ակտիվ գործակցություն է նախաձեռնվել՝ ազգային անվտանգության նոր ռազմավարության մշակման աշխատանքներում, հենց քաղաքացիական հասարակության հետ քննարկելով նաև հասարակական սեկտորի մասնակցության ձևաչափի հարցերը[11]:

Կարևոր է, որ հասարակական կազմակերպություններն անընդմեջ, այլ ոչ թե մի որևէ կարճ ժամանակահատվածում ներգրավված լինեն երկրում իրականացվող բարեփոխման ծրագրերում: Հասարակական կազմակերպությունտներն այդպիսով ապահովում և խթանում են հանրային կառավարմանն ու տեղի ունեցող գործընթացներին բնակչության քաղաքացիական մասնակցությունը՝ որոշումների ընդունման ժողովրդավարական ընթացակարգերի կատարելագործման ճանապարհով այդ գործում ներգրավելով քաղաքացիների լայն շերտեր:

Մի կողմից՝ հասարակական կազմակերպությունների դերն ազգային անվտանգության ապահովման համակարգում հնարավոր է ձևակերպել որպես գոյություն ունեցող և մշտապես ձևավորվող տարբեր մակարդակի հասարակական կառույցների ամբողջություն, որն իրականացնում է ընդհանուր քաղաքացիական անվտանգության գործառույթ, որոնց դերը որոշվում է հետևյալ գործառույթների իրականացման հնարավորությամբ.

- *սոցիալական վտանգների և սպառնալիքների աղբյուրների առաջացման նախազգուշացում,*
- *ճգնաժամային իրավիճակների, կոնֆլիկտների և հակասությունների նախանշում,*
- *քաղաքացիների և կազմակերպությունների սահմանադրական իրավունքների և ազատությունների, օրինական շահերի պաշտպանություն,*
- *հասարակական կարծիքի ձևավորում և դրա վրա ազդեցություն,*
- *պետական իշխանության մարմինների գործունեության նկատմամբ վերահսկողության իրականացում, այդ թվում՝ անվտանգության ոլորտում պետական քաղաքականության իրականացման և որոշումների կայացման նկատմամբ,*
- *հասարակական ներուժի մոբիլիզացում՝ ազդելու անվտանգության ոլորտում որոշումների մշակման, կայացման և դրանց իրագործմամբ խնդիրների լուծման գործընթացի վրա,*
- *քաղաքացիական գիտակցության զարգացում, սոցիալական համերաշխության և համաձայնության հաստատում,*
- *քաղաքացիների քաղաքական ակտիվության և իրավաքաղաքական մշակույթի բարձրացում, քաղաքական բազմակարծության զարգացում, մեկ քաղաքական գործչի (մեկ կուսակցության) կողմից պետական իշխանության ուզուրպացման կանխում, հասարակական կարծիքի հիման վրա պետական կառավարման մարմինների կողմից քաղաքականության մշակում և իրականացում, ընտրությունների կազմակերպման և իրականացման վրա հասարակական վերահսկողության զարգացում:*

Մյուս կողմից՝ հասարակական կազմակերպություններն ակտիվորեն ազդում են ազգային անվտանգության քաղաքականության և ապահովման պետաիշխանական համակարգի վրա: Հասարակական կազմակերպություններն արտահայտում են շահերի խմբեր, որոնք պետք է գիտակցվեն, արտաբերվեն և հասցվեն պետական համա-

պատասխան կառույցներին: Հասարակական կազմակերպություններն այս պարագայում միջնորդ են հանդիսանում քաղաքացու և պետության միջև:

Փաստորեն, հասարակական կազմակերպությունները բազմաթիվ միջոցներով վերահսկողություն են իրականացնում պետության գործունեության նկատմամբ՝ դրանով իսկ կատարելով այն մեխանիզմի դերը, որն ապահովում է հասարակության և պետության ուժերի միջև հավասարակշռությունը:

Հայաստանի Հանրապետության 2007 թվականի ազգային անվտանգության ռազմավարությամբ ամրագրվում է ինչպես պետության քաղաքականության մշակման և իրականացման գործընթացներում հասարակական կազմակերպությունների մասնակցությունը, այնպես էլ պետական քաղաքականության նկատմամբ վերջինիս վերահսկողությունը: Ազգային անվտանգության ռազմավարությամբ պետության արդյունավետ կառավարման գործում կարևորվում է հասարակական կազմակերպությունների զարգացումը, ինչպես նաև որոշումների նախապատրաստման և վերահսկողության գործընթացներում հասարակական կազմակերպությունների դերի բարձրացումը[12]:

Այսպիսով՝ հասարակական կազմակերպությունների գործունեությունը միանշանակ ազդում է ինչպես առանձին անհատի, այնպես էլ ամբողջ ազգային անվտանգության վրա: Ժամանակակից աշխարհում այն անվտանգության սուբյեկտ է և իր շուրջը ձևավորում է նոր սոցիալ-քաղաքական տարածություն՝ պաշտպանելով իր շահերն ու պահանջմունքները: Եթե պետության և հասարակական կազմակերպությունների համագործակցությունը խախտված է և չունի հստակ իրավաքաղաքական մեխանիզմ, իսկ նրանց հակասությունը չի լուծվում ժողովրդավարական ինստիտուտների միջոցով, ապա իրավիճակը դուրս է գալիս ժողովրդավարական դաշտի շրջանակներից և, հետևանքները շատ հաճախ լինում են բռնի ակցիաները:

Հայաստանի Հանրապետությունում տեղի ունեցող հասարակական-քաղաքական գործընթացները թույլ են տալիս եզրակացնել, որ Հայաստանում ձևավորվել և զարգանում են ազգային արժեհամակարգը որդեգրած և դրանք պաշտպանող հասարակական կազմակերպություններ, որոնց կայացումը բավական արդիական է Հայաստանի անվտանգության ապահովման տեսանկյունից: Մյուս կողմից՝ մեծ թափ է հավաքում նաև այդ արժեհամակարգի դեմ ուղղված կազմակերպությունների գործունեությունը: Ներկա պայմաններում ձևավորող և ինստիտուցիոնալ կարողությունների զարգացմանն ուղղված ռազմավարական բարեփոխումներ իրականացնող երկրում պետական կառավարման արդյունավետության կարևոր նախապայմաններից է առաջին խմբի կազմակերպությունների գործունեությունը:

Վերջին տարիներին նկատելի է նաև հասարակական շարժումների ձևավորման և զարգացման միտումներ, որոնք ազդեցություն են ունենում պետական քաղաքականության իրականացման վրա: Սակայն հարկ է նշել, որ պետական կառավարման մարմիններ-քաղաքացիական հասարակություն համագործակցությունը որևէ ընդհանուր ինստիտուցիոնալ մեխանիզմով կամ ծրագրով չի կարգավորվում, չնայած առկա են մի շարք հայեցակարգեր, կանոնակարգեր և խորհրդատվական մարմիններ:

Հայաստանի ազգային անվտանգության ռազմավարությունը, որը մշակվել է ԱՄՆ-ի պաշտպանության ազգային ինստիտուտի ուղղորդմամբ և հիմնված է ազգային անվտանգության մշակման ամերիկյան միաբայլ մոտեցման (մեթոդաբանության) վրա՝ կոնկրետ պարագայում հաշվի չի առնում վերազգային մակարդակից ազդեցությունները, դրանցով պայմանավորված սպառնալիքներն ու վտանգները (որոնց մեջ հսկայական են վերազգային կազմակերպությունների աջակցությունը վայելող հասարակական կազմակերպությունների գործունեությունից բխողները):

Հրատապ խնդիր է Հայաստանի համար այնպիսի ազգային անվտանգության ռազմավարության վերամշակումը, որը հաշվի կառնի բոլոր մակարդակներից բխող վտանգներն ու սպառնալիքները: ՀՀ հասարակական-քաղաքական կյանքին հասարա-

կական կազմակերպությունների մասնակցությունը պետք է որոշվի ազգային անվտանգության և զարգացման ապահովման անհրաժեշտության սկզբունքով, որտեղ առանձնահատուկ նշանակություն ունեն ինչպես միջպետական և միջէթնիկական մրցակցություններով պայմանավորված, այնպես էլ վերազգային մակարդակից ազդեցությունների մասին պատկերացումները: Ազգային անվտանգության համար կարևոր նշանակություն ունի պետության և ազգային կապիտալի կողմից հասարակական այն կազմակերպություններին աջակցությունը, որոնց գործունեությունը ուղղված է ազգային գաղափարների իրագործմանը, ինչպես նաև պետական կառավարման մարմինների և հասարակական կազմակերպությունների միջև լիարժեք փոխվստահության վրա հիմնված համագործակցությունը, ինչն էլ իր հերթին կնվազեցնի հասարակության շրջանում հակասությունների դրսևորման և երկրի ազգային անվտանգությունը վնասելու հնարավորությունները:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Քոչարյան Տ., Հայաստանի Հանրապետության ռազմական անվտանգության ապահովումը ազգային անվտանգության համատեքստում, Երևան, 2012, էջ 140-153:
2. Ավետիսյան Ա., Զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության հարցի շուրջ, «Հայկական բանակ» ռազմագիտական հանդես, 2-3 (56-57), 2008, էջ 80-83:
3. «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենք, ՀՀ ՊՏ 2017.01.25/5(1280), 2-րդ հոդված:
4. ՀՀ կառավարության էլեկտրոնային ռեգիստր, Տարեկան հաշվետվություններ, 01.01.2019թ. դրությամբ // https://www.e-register.am/am/docs/498
5. Բեգլարյան Ա., Քաղաքացիական հասարակությունը Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ապահովման համատեքստում, Ատենախոսություն ք.գ.թ-ի հայցման համար, Երևան, 2016, էջ 87:
6. Տես, օրինակ, Talcott Parsons, The System of the Modern Societies, University of California, Prentice-Hall, 1971, 152 p., կամ Jean L.Cohen, Class and Civil Society, The Limits of Marxian critical theory, University of Massachusetts Pres, 1982, 264 p.
7. Яшина, А.В., Гражданское общество как субъект обеспечения национальной безопасности: опыт России и США // И*сторические, философские, политические и юридические науки, культурология и искусствоведение. Вопросы теории и практики,* 2012, (11(2)), стр. 218, 218-221
8. Մասնավորապես, The role of NGOS in European governance, The Analyses of The “Stefancel Mare” University of Suceava. Fascicle of The Faculty of Economics and Public Administration. Vol. 10, N 2 (12), 2010, p. 284-289
9. Հայաստանի Հանրապետության Հանրային խորհուրդ. կառուցվածքը, 2019թ. // http://www.publiccouncil.am/hy/structure/
10. ՀՀ պաշտպանության նախարարին կից հասարակական խորհուրդ. աշխատակարգ, 2019թ. // http://www.mil.am/hy/libraries/27#b65
11. Օրինակ, ՀՀ Անվտանգության խորհրդի գրասենյակ, Հանդիպում քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ, 31.07.2019թ. // http://seco.am/information/press_releases/245?lang=hy

12. ՀՀ Նախագահի 2007 թվականի փետրվարի 7-ի թիվ ՆՀ-37-Ն հրամանագիրը «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարությունը հաստատելու մասին», ՀՀ ՊՏ 2007.02.15/11, 07.02.2007:

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության քաղաքականության շրջանակներում հասարակական կազմակերպությունների ներգրավվածության տեսամեթոդաբանական հիմնախնդիրը

Սևակ Նիկողոսյան

Հոդվածում հետազոտվում են հասարակական կազմակերպությունների դերն ու ազդեցությունը ազգային անվտանգության քաղաքականության մշակման և իրականացման գործընթացում, վերլուծվում են Հայաստանի Հանրապետությունում այդ կազմակերպությունների գործունեության առանձնահատկությունները՝ կապված երկրի կառավարման աջակցության և, հատկապես, ազգային անվտանգության հիմնահարցերով հասարակության և իշխանական թևի գործակցության կառուցակարգերի հետ: Ազգային անվտանգության կառուցակարգում հասրական վերահսկողությունն իրականացվում է պետական իշխանության տարբեր թևերի ու հասարակական ինստիտուտների իրականացրած հսկողական գործունեության միջոցառումներ՝ թե, ընդհանուր առմամբ, երկրի անվտանգության համակարգի գործունեության, թե պետության ազգային անվտանգության առանձին ենթաոլորտների քաղաքականության առանձին ասպեկտների նկատմամբ:

РЕЗЮМЕ

Теоретико-методологическая проблема привлечения общественных организаций в рамках политики национальной безопасности Республики Армения

Севак Никогосян

***Ключевые слова*:** национальная безопасность, политика, управление, общественная организация, гражданский контроль, реформы.

В статье исследуются роль и влияние общественных организаций на процесс разработки и реализации политики национальной безопасности, анализируются особенности деятельности этих организаций в Республике Армения, связанные с поддержкой управления страной и, в частности, с механизмами взаимодействия между властью и обществом по вопросам национальной безопасности. В механизме национальной безопасности общественнуй контроль осуществляется при помощи мероприятий, проводимыми разными ветвями государственной власти и общественными институтами как, в общем смысле, над деятельностью системы безопасности страны, так и над отделными аспектами политики отраслей национальной безопасности государства.

SUMMARY

The Theoretical and Methodological Problem of Attracting Non-Governmental Organizations within the Framework of the National Security Policy of the Republic of Armenia

Sevak Nikoghosyan

Keywords: national security, policy, management, public organization, civilian control, reform.

The article examines the role and influence of public organizations on the process of developing and implementing national security policies, analyzes the characteristics of these organizations in the Republic of Armenia, associated with supporting the governance of the country and, in particular, with the mechanisms of interaction between the government and society on issues of national security. In the mechanism of national security, public control is exercised through measures carried out by different branches of government and public institutions both, in a general sense, over the activities of the country's security system and over the separate aspects of the policy of the national security sectors of the state.